# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/03 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 3 | Օդորակիչ 18000 BTU՝ սպլիտ, ինվերտորային, տաքացնող և հովացնող, գույնը՝ սպիտակ, ներքին բլոկի աղմուկի մակարդակը՝ առավելագույնը 48 դեցիբել, արտաքին բլոկի աղմուկի մակարդակը՝ առավելագույնը 60 դեցիբել, Էներգախնայողության դասը՝ առնվազն A, էլեկտրասնուցման լարումը՝ 220-240Վ/50Hz, հովացուցիչ նյութ (refrigerant) R410A կամ R32, հեռակառավարման վահանակով, աշխատանքային ռեժիմը ձմռան պայմաններում՝ առնվազն -15 աստիճան ցելսիուս: Անհրաժեշտ հենակը, մալուխները և խողովակները մինչև 5մ (ըստ անհրաժեշտության) տրամադրում է Վաճառողը անվճար: Օդորակիչները պետք է լինեն չօգտագործված և գործարանային փաթեթավորմամբ: Օդորակիչների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ կամ օդորակիչների մատակարարման ժամկետում Գնորդի ծանուցմամբ (գրությամբ կամ էլ. փոստի միջոցով) օդորակիչների տեղադրման կոնկրետ վայր (Երևան քաղաքի և/կամ ՀՀ մարզերի դատարանների վարչական շենքեր) իրականացնում է Վաճառողը: Օդորակիչների մատակարարման ժամկետում չտեղադրված օդորակիչների տեղափոխման, 24 ամսվա ընթացքում տեղադրման ծախսերը իրականացվում են Վաճառողի կողմից: Օդորակիչների տեղադրման (ներառյալ տեղադրման համար անհրաժեշտ բոլոր նյութերը), ինչպես նաև վերամբարձ կռունկի ծախսերը իրականացվում են Վաճառողի կողմից: Օդորակիչների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 3 տարի: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО НАР-АВ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/03 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 3 | |